**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի 2 հողամաս հասցեում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի կառուցման**
**2-րդ հանրային լսում**

*12.01. 2026թ.*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024 թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2026 թ. հունվարի 12-ին, ժամը 15:00-ին, Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Մյասնիկյան բնակավայրի 2 հողամաս հասցեում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Հանրային լսմանը ներկա էին ՇՄՆ փորձաքննական կենտրոնի աշխատակիցը, Արմավիր համայնքապետարանի, ինչպես նաև Մյասնիկյան վարչական շրջանի աշխատակիցները, նախաձեռնող կողմի ներկայացուցիչներ, ՇՄԱԳ հաշվետվությունը կազմող մասնագետներ և Մյասնիկյան բնակավայրի բնակիչներ (մասնակիցների ցանկը կցվում է):

ՇՄԱԳ-ի ներկայացուցիչ Սուսաննա Անտոնյանը ներկաներին ներկայացրեց ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը և նախատեսվող շենքի կառուցման ընթացքում հնարավոր առաջացող բնապահպանական ռիսկերը և դրանց կանխարգելման միջոցառումները:

Մյասնիկյան բնակավայրի բնակիչները բարձրացրեցին իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերում էին խմելու ջրին, որը, ըստ բնակիչների կողմից փոխանցված տեղեկատվության, բավականին կոշտ է, և իրենք այն միայն կոմունալ-կենցաղային նպատակներով են օգտագործում, իսկ խմելու ջուրը գնում են մասնավոր ընկերություններից: Նրանց խնդրանքն էր, որ ՇՄՆ նախարարության աշխատակիցը բարձրացնի այդ հարցը, և քննարկվի նաև գնի վերաբերյալ խնդիրը, քանի որ իրենք չեն խմում այդ ջուրը, բայց վճարում են խմելու ջրի համար նախատեսված արժեքով:

Սուսաննա Անտոնյանը պատասխանեց, որ այդ հարցը հնարավոր է լուծել համայնքի հետ միասին, բայց ամեն դեպքում ինքը իր լիազորությունների շրջանակներում կբարձրաձայնի այդ հարցը: Արմավիր համայնքապետարանի ներկայացուցիչները հավելեցին, որ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի կառուցումը ամենախոշոր ներդրումներից է իրենց համայնքում, և իրենք շատ ուրախ են, որ «Հայաստանի մանուկներ» ԲՀ-ն հենց իրենց համայնքում է իրականացնելու զարգացման կենտրոնի կառուցումը, որի շահագործումը կնպաստի համայնքի

զարգացմանը, ինչպես նաև կապահովի համայնքում ապրող երեխաների բարձր կրթական միջավայրի ձևավորմանը և բազմակողմանի զարգացմանը:

Բնակիչների կողմից հարց հնչեց նաև երեխաների տեղափոխման վերաբերյալ:

«Հայաստանի մանուկներ» ԲՀ-ի ներկայացուցիչը նշեց, որ ամենայն հավանականությամբ գործելու է երթուղային, որը կապահովի համայնքի տարբեր բնակավայրերից երեխաների երկկողմանի տեղափոխությունը, քանի որ այժմ Դսեղ բնակավայրում իրենց կողմից հիմնած մեկ այլ զարգացման կենտրոնում գործում է երթուղի:

Համայնքապետարանի աշխատակցի կողմից հարց բարձրացվեց ջրամատակարարման և ջրահեռացման հետ կապված: Նախաձեռնող կողմի ներկայացուցիչը նշեց, որ կեղտաջրերի հեռացումը իրականացվելու է մաքրման կայանի միջոցով, որի արդյունքում առաջացող ջուրը հնարավոր է օգտագործել ոռոգման համար: Շահագործման ընթացքում հնարավոր է առաջանա հավելյալ ոռոգման ջրի պահանջ, որը ձեռք կբերվի համայնքային ոռոգման ջրատարից:

Քննարկվեց նաև տարածքի բարեկարգման և կանաչապատման հարցը: Ներկայացվեց, որ կանաչապատման լուծումները համաձայնեցվելու են համայնքապետարանի հետ, և ընտրվելու են տարածքին բնորոշ բուսատեսակներ:

Հանրային լսմանը այլ հարցեր, առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

**ՇՄԱՓԿ փորձագետ՝** **Սուսաննա Անտոնյան**

**«Հայաստանի մանուկներ» ԲՀ-ի ներկայացուցիչ՝**